ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
18.10.2019 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ N ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/4-Ն ԾԱԾԿԱԳՐՈՎ
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱՆԱԽՍՀԱՇՎԱՅԻՆ
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

Ք. Երևան <<27>> դեկտեմբերի 2019թ.

Ջրային կոմիտեն, ի դեմս Կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները ժամանակավոր կատարող Ա. Մարգարյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մոդուլ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Գասպարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և հիմք ընդունելով 18.10.2019թ. կնքված ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/4-Ն ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.6 կետերը փոխահադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պայմանագրի թիվ 1 Հավելվածում աշխատանքի կատարման <<մինչև 25.12.2019թ.>> ժամկետը փոխարինել <<ֆինանսական միջոցների առկայության դեպքում համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում>> ժամկետով:

1.2 Պայմանագրի թիվ 2 հավելվածում <<41 280 000>> թիվը փոխարինել <<30 960 000>> թվով:

1.3 Նախագծային աշխատանքները շարունակելու նպատակով ֆինանսական միջոցների առկայության դեպքում կողմերի միջև կկնքվի համապատասխան համաձայնագիր:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման և կնքման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը: Համաձայնագրի գործողությունը տարածվում է կողմերի՝ մինչև համաձայնագրի կնքումը փաստացի ծագած հարաբերությունների վրա, ինչպես նաև գործում է մինչև կողմերի կողմից սույն համաձայնագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած իրավունքները ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է համաձայնագրի մեկ օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
ՖՆ վարչություն
Հ/Հ 900011028256
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղարի
պարտականությունները
ժամանակավոր կատարող

_____ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<<Մոդուլ>> ՍՊԸ
Ք. Երևան, Ն.Զարյան 22, տարածք 3
էլ. հասցե info@modul.am
հեռ. 011201511
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Աշտարակ մ/ճ
Հ/Հ 11500404281400
ՀՎՀՀ 05020542
Տնօրեն

_____ Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ.